ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼ ՓԱՇԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ 1915—1916 թթ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ֆրանսիայի Ազգային ժողովի ստորին պալատի 1998 թ. մայիսին ընդունած որոշումը՝ ճանաչել հայերի ցեղասպանությունը, ինչպես հայտնի է, սնոր իրարանցում և աղմուկ առաջ բերեց Թուրքիայում։ Երկրի պաշտոնական շրջանները հատկապես խիստ հարձակում սկսեցին բոլոր նրանց դեմ, ովքեր խոսում կամ գրում են այն մասին, թե 1915—1916 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի է ունեցել արևմտահայության ցեղասպանություն։ Այսպիսի կարծիք ունեցողներին թուրքական իշխանությունները համարում են իրենց երկրի թշնամիներ:

Զարմանալին, սակայն այն է, որ թուրք աղմկարարները «մոռանում են» այն իրողությունը, որ հայության Մեծ Եղեռնի փաստը դեռևս տասնյակ տարիներ առաջ հրապարակորեն ընդունել է նաև թուրք *հայտնի նացիոնալիստ, Թուրքիայում այսօր գրեթե սրբացված Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը («Թուրքերի հայրը»)։ Բանն այն է, որ Թուրքական Հանրապետության հիմնադիր, նրա առաջին պրեզիդենտ Մուստաֆա Քեմալը 1926 թ. հունիսի 22-ին Անկարայում շվեյցարացի լրագրող Էմիլ Հիլդերբրանտի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ խոսելով Օսմանյան կայսրությունում 1915—1916 թթ. տեղի ունեցած բարբարոսությունների մասին ասել է.* «Երիտթուրքերը պետք է պատասխան տային մեր հպատակ մի քանի միլիոն քրիստոնյաների համար, որոնք դաժանորեն ամբոխվեցին իրենց հայրենի օջախներից և ոչնչացվեցին...»: (Young Turkey Party, who should have been made to account for the lives of millions of our Christian subjects who were ruthlessly driven in masse from their homes and massacred...):

Այս տողերը տպագրվեցին «Լոս-Անջելես Թքզամիներ» թերթի 1926 թ. օգոստոսի 1-ի համարում։ Անցել են շատ տարիներ, բայց ոչ ոք չի հերքել նշված հրապարակումը։

Ֆրանսիացի հայտնի հրապարակախոս Պոլ դյու Վեուն իր մի շարք աշխատություններում և մասնավորապես «Ալեքսանդրետի աղետը» աշխատության մեջ, որ լույս է տեսել Փարիզում, ֆրանսերեն, 1938 թ., գրել է, որ Մուստաֆա Քեմալ փաշան 1919 թ. հունվարի 27-ին Ստամբուլի ռազմական դատարանում տված իր ցուցմունքներում երիտթուրքերի պարագլուխներ Էնվեր, Թալեաթ, Ջամալ փաշաների և նրանց գործակիցների մասին ասել է, որ «նրանք հաստատել էին բռնակալության բոլոր ձևերը, կազմակերպել տեղահանություն և կոտորած, նրանք այրել էին ծծկեր երեխաներին՝ նրանց վրա նավթ լցնելով, բռնաբարել կանանց և երիտասարդ աղջիկներին՝ ոտքերն ու ձեռքերը կապած ծնողների աչքերի առջև, խլել աղջիկներին հայրերից ու մայրերից, բռնագրավել շարժական ու անշարժ գույքը և Միջագետքում թշվառ վիճակում գտնվող մարդկանց ամբոխել՝ նանապարհին գործադրելով ամեն տեսակի դաժանություն: Նրանք նավակներ են նստեցրել հազարավոր

անմեղ մարդկանց և ջրախեղդ արել ծովում: Իրենց մարդկանց միջոցով հայտարարել են մահմեդականություն ընդունելու անհրաժեշտություն... Սովահար ծերունիներին հարկադրում էին քայլել ամիսներով, քշում նրանց հարկադրական աշխատանքի... Կանանց նետում էին հասարակաց տներ, դնում նրանց այնպիսի պայմաններում, որոնք նախորդը չունեն ոչ մի ազգի պատմության մեջ»:

Ինչպես տեսնում ենք Մ. Քեմալն անվիրապահորեն ընդունել է հայերի ցեղասպանության փաստը: Ինչո՞ւ: Համենայն դեպս ոչ այն պատճառով, որ նա եղել է Թուրքիայի թշնամի: Գուցե նա եղել է հայասե՞ր: Իհարկե, այդ ևս բացառվում է: Հանրահայտ է, որ 1920—1922 թթ. Քեմալ փաշան հայերի ու հույների նկատմամբ իրագործեց դաժան ցեղասպանության քաղաքականություն: Բավական է հիշել միայն այն, թե ինչպիսի բարբարոսություններ կատարեցին քեմալիստ աղգայնամոլները 1920—1921 թթ. Արևելյան Հայաստանում և 1922 թ. Իզմիրում (Զմյուռնիայում):

Ավելորդ չեմ համարում նշել հետևյալ հանգամանքը ևս: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակից Կայզերական Գերմանիայի պետական արխիվներում պահվում են դաղտնի և խիստ գաղտնի բնույթի շատ փաստաթղթեր, որոնց մի զգալի մասը դեռևս 1919 թ. հրապարակել է Յոհաննես Լեպսիուսը «Գերմանիան և Հայաստանը» գերմաներեն մեծածավալ գրքում: Այստեղ զետեղված դոկումենտներում բազմիցս խոսվում է այն մասին, որ 1915—1916 թթ. երիտթուրքերի (իթթիհադականների) կառավարությունը նախորդ կազմված ծրագրով ու ամենավայրագ ձևերով իրագործել է արևմտահայերի գենոցիդը: Հարց է ծագում, ինչո՞ւ մինչև այսօր ոչ մի թուրք պատմաբան չհերքեց այդ փաստաթղթերը: Նկատենք, որ չեն հերքված նաև նման կարգի արխիվային այն նյութերը, որոնք հրապարակվել են Ավստրո-Հունգարիայում ու Բուլղարիայում: Հիշենք, որ այս երկու պետությունները ևս 1914—1918 թթ. պատերազմի ժամանակ նույնպես Թուրքիայի դաշնակիցներն էին և բնական է, որ չէին կարող կեղծ փաստաթղթեր հորինել իրենց բարեկամ պետության դեմ:

Հայտնի է, որ Մեծ Եղեռնի՝ արևմտահայության 1915—1916 թթ. ցեղասպանության վերաբերյալ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների և մի շարք այլ երկրների պետական արխիվներում ևս պահվում են հարուստ նյութեր, որոնց մի զգալի մասն արդեն հրապարակվել է: Թուրքական կառավարության անօրինակ ոճրագործությունների մասին կան բազմաթիվ անհերքելի փաստեր և վկայություններ մեծ ողբերգության ժամանակակիցներ ու ականատեսներ Յ. Լեպսիուսի, Ա. Վեգների, Հ. Շտրումերի, Ջեյմս Բրայսի, Ա. Թոյնբիի, Յու. Վեսելովսկու, Վ. Գորդլևսկու, Հ. Մորգենթաուի, Հ. Գիբոնսի, Հ. Բարբիի, Ֆ. Նանսենի, Գ. Պալաքյանի, արևմտահայերի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի և ուրիշների հիշողություններում ու աշխատություններում, ինչպես նաև հետագայում տարբեր լեզուներով լույս տեսած ուսումնասիրություններում, որոնց թիվը բավական մեծ է (տե՛ս Հայոց 1915—1916 թթ. ցեղասպանությունը. մատենագիտություն. Երևան, 1995):

МУСТАФА КЕМАЛЬ ПАША О ГЕНОЦИДЕ ЗАПАДНЫХ АРМЯН В 1915—1916 гг.

Академик НАН РА М. Г. НЕРСИСЯН

Резюме

Принятое в мае 1998 г. решение нижней палаты Национального собрания Франции—признать геноцид армян, как известно, подняло большой переполох и шум в Турции. Официальные круги страны начали резкие нападки против всех тех, кто говорит или пишет о том, что в 1915—1916 гг. в Османской империи был совершен геноцид западных армян. Турецкие власти считают *врагами Турции* всех, имеющих такое мнение. Однако возникает вопрос: почему в Турции «забывают», что факт геноцида армян еще в 1926 г. публично признал ярый националист, почти обожествленный в современной Турции Мустафа Кемаль Ататюрк («отец турок»). Дело в том, что основатель Турецкой республики и ее первый президент Кемаль паша 22 июня 1926 г. в Анкаре в интервью, данном швейцарскому журналисту Эмилю Гильдербранту, говоря о варварствах младотурок в 1915—1916 гг., подчеркнул: *«Младотурецкая партия должна была дать ответ за несколько миллионов наших подданных-христиан, которые были жестоко изгнаны из своих родных очагов и уничтожены»*. Эти строки были опубликованы в газете «Лос-Анжелес Игзаминер» 1 августа 1926 г. Прошло много лет, но никто не опроверг эту публикацию.

Известный французский публицист Поль дю Вэу в ряде своих исследований, в частности, в работе «Бедствие Александретты», вышедшей в Париже в 1938 г. на французском языке, писал, что Мустафа Кемаль паша 27 января 1919 г. в своих показаниях, данных на военном трибунале в Стамбуле, подчеркнул, что массовые избиения армян в 1915—1916 гг. осуществили главари младотурок, что *«они организовали депортацию и резню, сжигали грудных младенцев, обливая их керосином, насиловали женщин и молодых девушек на глазах у связанных по рукам и ногам родителей, вырывали девочек из рук отцов и матерей, отбирали движимое и недвижимое имущество и высылали находившихся в Месопотамии в жалком положении людей, применяя в дороге всевозможные жестокости. Они сажали тысячи невинных людей в лодки и топили их в море. Через своих людей они объявили о необходимости принятия мусульманства... Они заставляли оголодавших стариков месяцами идти, погоняя их на принудительные работы. Их жен бросали в публичные дома, ставили их в такие условия, которые не имели прецедента в истории ни одного народа»*.

Не считаю излишним отметить также следующее обстоятельство. В государственных архивах Кайзеровской Германии—союзницы Турции в Первой мировой войне—хранится множество секретных и строго секретных документов, значительная часть из которых еще в 1919 г. была опубликована Иоганнесом Лепсиусом в известной книге «Германия и Армения» (на немецком языке). В этих документах неоднократно говорится о том, что в 1915—1916 гг. правительство младотурок-иттихадистов осуществило *геноцид западных армян. Возникает вопрос: почему же поныне ни один турецкий историк не опроверг эти документы?* Заметим, что не опровергнуты также архивные документы такого же рода, которые были опубликованы в Австро-Венгрии и Болгарии. Известно, что эти два государства в период войны 1914—1918 гг. также были союзниками Турции и, естественно, не могли бы придумать подложные документы против дружественной державы.

MUSTAFA KEMAL PASHA ON THE GENOCIDE OF THE WESTERN ARMENIANS IN 1915—1916

Academician of the NAS of the RA M. G. NERSISSIAN

S u m m a r y

The decision accepted by the Lower House of the French National Assembly in May 1998 to recognize the genocide of the Armenians caused a big stir in Turkey. The official circles of the country started an attack against those who spoke or wrote about the fact of Genocide of the Western Armenians in Ottoman Empire in 1915—1916. Those who are of such an opinion are considered by the Turkish government as enemies of Turkey. It is surprising, however, that the Turkish noise-makers «forgot» that the fact of the Great Genocide of the Armenians was publicly accepted also by Mustafa Kemal Ataturk («father of Turks») who is almost sanctified in present-day Turkey. On July 26, 1926 Mustafa Kemal, the founder and the first president of the Turkish Republic, gave an interview to Emil Hilderbrant, a Swiss journalist. Talking about the barbarism in 1915—1916 in Ottoman Turkey he said: «Young Turkey Party, who should have been made to account for lives of millions of our Christian subjects who were ruthlessly driven in masse from their homes and massacred...» These words were published in the newspaper «Los Angeles Examiner» on August 1, 1926. Many years passed but nobody refuted this publication.

Paul du Veu, a French popular publicist, in some of his works, especially in «The Disaster of Alexandrit» which was published in Paris in French in 1938, wrote that in January, 1919, Mustafa Kemal Pasha gave testimonies to Istanbul military court on the leaders of the Young Turks Enver, Taleat and Jemal Pashas and on their partners saying that they had organized the massive massacres of the Armenians and committed unbelievable crimes.